ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/116

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Բողոք բերող՝ «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչ՝ Ա. Եղիազարյանի,
«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ռաֆայելյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 20.12.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժորովին դադարեցնել 15.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊ ընկերության վերաբերյալ կայացված որոշումը:

2. Պարտավորեցնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժորովին «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

3. Պարտավորեցնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովին «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

4. Պարտավորեցնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովին «Բի Բի Էս Սի» ՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. Պարտավորեցնել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊ ընկերությանը յուրաքանչյուր շարժիչավոր փոխադրամիջոցի մասով ներկայացնել իր առաջարկած գնի արժեքի հաշվարկը (բացվածքը) և այլ մանրամասն տեղեկատվություն, որով պայմանավորված է եղել տվյալ շարժիչավոր փոխադրամիջոցի ապահովագրական ծառայությունների ձեռքբերման արժեքի չափը:

6. Պարտավորեցնել «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊ ընկերությանը յուրաքանչյուր շարժիչավոր փոխադրամիջոցի մասով ներկայացնել իր առաջարկած գնի արժեքի հաշվարկը (բացվածքը) և այլ մանրամասն տեղեկատվություն, որով պայմանավորված է եղել տվյալ շարժիչավոր փոխադրամիջոցի ապահովագրական ծառայությունների ձեռքբերման արժեքի չափը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 20.12.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից 22.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/116 համարի ծածկագիրը:

29.12.2021թ.-ին, 13.01.2022թ.-ին և 19.01.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 13.01.2022թ.-ին և որոշման հրապարակման օր է նշանակվել 19.01.2022թ.-ին:

2. «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն 20.12.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Հարցում):

Վերոհիշյալ հարցման մասնակցության հայտեր են ներկայացրել «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերությունը, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲ ընկերությունը, «Արմենիա ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊ ընկերությունը, «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը, Ա/Ձ Արթուր Կարապետյանը և «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊ ընկերությունը: «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ»

ՍՊ ընկերությունը և Ա/Ձ Արթուր Կարապետյանը չեն հանդիսանում ապահովագրական ընկերություններ:

Համաձայն «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 10.12.2021 թ. նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի՝ նվազագույն գին առաջարկել է «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊ ընկերությունը՝ 4.553.000 ՀՀ դրամի չափով, իսկ ՊԵԿ-ի կողմից պլանավորված առավելագույն ընդհանուր արժեքը եղել է 4.986.000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 10.12.2021 թ. նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ բոլոր մասնակիցները ճանաչվել են հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներ, իսկ 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և բոլոր մասնակիցներին 15.12.2021 թ. ժամը 11.00-ին հրավիրել գների նվազեցման համար միաժամանակյա բանակցությունների:

Համաձայն Հանձնաժողովի 15.12.2021 թ. նիստի թիվ 4 արձանագրության՝ Հանձնաժողովի բանակցություններին մասնակցելու համար ներկայացել էին «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերությունը, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲ ընկերությունը, «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը և «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊ ընկերությունը: Բանակցությունների ավարտին մասնակիցները հայտով ներկայացված գները թողել են անփոփոխ: Նշված արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊ ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից՝ հաշվի առնելով, որ վերջինիս կողմից ներկայացված գինը չի գերազանցում ՀՀ ՊԵԿ-ի կողմից պլանավորված առավելագույն ընդհանուր գինը:

Հանձնաժողովը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն է հրապարակել 15.12.2021 թ., որի համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊ ընկերությունը, քանի որ վերջինս եղել է նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը: Հայտարարության մեջ միաժամանակ նշվել է, որ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որը լրանում է 20.12.2021 թ.:

Ուշագրավ է, որ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերությունը, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲ ընկերությունը և «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը նույն գնային

առաջարկն են ներկայացրել՝ 4.846.000 ՀՀ դրամի չափով, սակայն անհասկանալի պատճառներով «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն նրանցից հետո հաջորդ տեղն է զբաղեցրել (5-րդը), այն էլ այն պարագայում, որ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը չի հանդիսանում ապահովագրական ընկերություն, այն է՝ ապահովագրական ծառայություններ մատուցող, ուստի ընդհանրապես իրավունք չուներ մասնակցելու գնման ընթացակարգին:

Ա) Սույն բողոքի քննության համար էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի կողմից առաջարկված նվազագույն գինը Հարցմանը կից ՀՀ պետական եկամուտների կոմիտեին ենթակա մարմիններին ամրացված ընդհանուր թվով 146 տրանսպորտային միջոցների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ ծառայություն) համար վճարման ենթակա ապահովագրավճարն է:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ ԱՊՊԱ օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ ապահովագրավճարը ԱՊՊԱ պայմանագրով սահմանված չափով և պայմաններով ապահովադրի կողմից ապահովագրական ընկերությանն ԱՊՊԱ իրականացնելու ողջ ժամանակահատվածի համար վճարման ենթակա գումարն է:

ԱՊՊԱ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի հավելվածում սահմանված բանաձևի հիման վրա հաշվարկվում և Բյուրոյի խորհրդի կողմից առնվազն տարին մեկ սահմանվում են հիմնական և բազային ապահովագրավճարների առավելագույն սահմանաչափերը, ինչպես նաև ռիսկայնության գործակիցների թույլատրելի արժեքները և Բոնուս-Մալուս գործակիցների մեծությունները:

Նույն հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ԱՊՊԱ իրականացնող յուրաքանչյուր ապահովագրական ընկերություն պարտավոր է իր ինտերնետային կայքում ունենալ ապահովագրավճարի հաշվիչ, որին ներկայացվող պահանջները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: Տվյալ ապահովագրական ընկերության ինտերնետային կայքում տեղադրված ապահովագրական հաշվիչի միջոցով հաշվարկված ապահովագրավճարի մեծությունը չի կարող տարբերվել նույն պայմաններով ապահովադրի համար տվյալ ապահովագրական ընկերության կողմից ԱՊՊԱ կանոնների (պայմանների) հիման վրա հաշվարկվող ապահովագրավճարի մեծությունից:

ԱՊՊԱ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետի 7-րդ և 11-րդ ենթակետերի համաձայն՝ Բյուրոյի խորհուրդն է սահմանում ապահովագրավճարների զեղչերի ... և դրա կիրառման

կարգը, ինչպես նաև ԱՊՊԱ ոլորտում կիրառվող ապահովագրավճարների առավելագույն սահմանաչափերի հաշվարկման մեթոդաբանության կիրառման կանոնները:

ԱՊՊԱ օրենքին կից՝ որպես հավելված, սահմանվել է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գծով ապահովագրավճարների հաշվարկման մեթոդաբանությունը (այսուհետ՝ հավելված):

Հավելվածի 1.3. կետի համաձայն՝ ԱՊՊԱ գծով ապահովագրավճարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ԱՎ=ԲԱ . ԲՄ

որտեղ՝

ԱՎ-ն ապահովագրավճարն է.

ԲԱ-ն բազային ապահովագրավճարն է.

ԲՄ-ն տվյալ ապահովադրի համար կիրառվող Բոնուս-Մալուս գործակիցն է:

Հավելվածի 1.4. կետի համաձայն՝ բազային ապահովագրավճարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ԲԱ=ՀԱ . Π ռգi

որտեղ՝

ԲԱ-ն բազային ապահովագրավճարն է.

ՀԱ-ն հիմնական ապահովագրավճարն է.

ռգi -ն ռիսկայնության գործակիցներն են՝ ըստ ապահովագրվող տրանսպորտային միջոցի և (կամ) ապահովադրի և (կամ) ապահովագրված անձի ռիսկայնության տարբեր աստիճանների (դասերի):

Վերոնշյալ իրավական դրույթների վերլուծությունից հստակ է, որ ապահովագրավճարը հաշվարկելիս ապահովագրական ընկերությունները պարտավոր են ղեկավարվել բացառապես ԱՊՊԱ օրենքով և օգտագործել Հավելվածում նշված բանաձևերը, որի բոլոր տարրերը (գործակիցները, բացի Բոնուս-Մալուս գործակցից) սահմանվում են «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ՀԿ-ի խորհրդի (այսուհետ՝ Բյուրո) կողմից: Միակ փոփոխվող գործակիցը, որ տարբեր ապահովադիրների համար կարող է տարբեր լինել, տվյալ ապահովադրի համար կիրառվող Բոնուս-Մալուս գործակիցն է:

Հավելվածի 4.1. կետի համաձայն՝ Բոնուս-Մալուս (այսուհետ՝ ԲՄ) համակարգն ապահովադիրների և (կամ) ապահովագրված անձանց վարորդական պատմության վրա հիմնված ապահովագրավճարների տարբերակման համակարգ է ըստ ԲՄ դասերի, այդ

դասերին համապատասխանող ԲՄ գործակիցների և ապահովադիրների՝ դասից դաս անցման կանոնների:

Ստացվում է, որ Հարցմանը մասնակցել են թվով 4 ապահովագրական ընկերություններ և թվով 2 ոչ ապահովագրական ընկերություններ (որոնք իրավունք չունեին մասնակցելու Հարցմանը), որոնց ներկայացրած գնային առաջարկները հետևյալն են՝

1	«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ	4 553 000
2	«ԱՐՄԵՆԻՍ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ	4 567 000
3	«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ	4 846 000
4	«ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ	4 846 000
5	«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	4 846 000
-	Ա/Ձ Արթուր Կիրակոսյան	5 877 600

Փաստորեն՝ ապահովագրական ընկերություններից երկուսը՝ 3-րդ և 4-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցները, ինչպես նաև «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ն առաջարկել են վերոհիշյալ բանաձևով հաշվարկված նույն գինը՝ 4.846.000 ՀՀ դրամ: Մինչդեռ մյուս երկու ապահովագրական ընկերություններն առաջարկել են վերոհիշյալ բանաձևով հաշվարկված գնից ցածր գներ, որոնց հաշվարկման մեթոդաբանությունն անհասկանալի է և չի տեղավորվում բանաձևի շրջանակներում: Ընդգծենք, որ Հարցման հրավերով չի պահանջվել արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք, որի առկայության դեպքում, սակայն, հստակ կլիներ, թե կոնկրետ որ շարժիչավոր փոխադրամիջոցի մասով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն և «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ն որքան են նվազեցրել ապահովագրավճարի չափը:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ապահովագրական ընկերություններն իրավասու չեն ինքնուրույն զեղչեր կիրառել և/կամ նվազեցնել ապահովագրավճարի չափը:

Բյուրոյի կողմից ընդունված RL1-001 կանոնների Հավելված 3-ի 12-րդ կետի համաձայն՝ Ապահովագրողներն անձամբ կամ իրենց ներկայացուցիչների՝ ներառյալ ապահովագրական գործակալների միջոցով իրավունք չունեն ԱՊՊԱ պայմանագրի համար սույն կանոնների համաձայն հաշվարկված վերջնական ապահովագրավճարների նկատմամբ կիրառել որևէ ուղղակի և անուղղակի զեղչեր՝ ներառյալ տրամադրել ԱՊՊԱ պայմանագրի կնքմանը ուղեկցող ցանկացած անհատույց կամ զեղչված գնով ծառայություններ կամ նվերներ:

Բյուրոյի կողմից ընդունված RL1-001 կանոնների 40-րդ կետի համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագրերը կարող են կնքվել՝

1) Ապահովագրողների կողմից անձամբ կամ իրենց կողմից լիազորված անձանց (ներառյալ ապահովագրական գործակալների) միջոցով, կամ՝

2) սույն կանոններով նախատեսված կարգով և դեպքերում՝ Ապահովադրի կողմից առցանց էլեկտրոնային ցանկացած եղանակով՝ ներառյալ ինտերնետային կայքի, վճարային համակարգերի, տերմինալների միջոցով եւ բջջային հավելվածներով: Ընդ որում՝ առցանց էլեկտրոնային եղանակով կնքվող պայմանագրերը համարվում են առանց ապահովագրական գործակալի միջնորդության կնքված պայմանագրեր:

Սույն բողոքի քննության համար կարևոր է նաև այն հանգամանքը, որ Ապահովագրողները բոլոր ԱՊՊԱ պայմանագրերի գծով պետք է կիրառեն միևնույն հիմնական ապահովագրավճարի չափը, բացառությամբ Ապահովադիրների կողմից առցանց էլեկտրոնային ցանկացած եղանակով կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի, որոնց համար պետք է կիրառվի տվյալ Ապահովագրողի կողմից ընտրված հիմնական ապահովագրավճարի չափից հինգ տոկոս ցածր չափ՝ անկախ նրանից, թե նման նվազեցման արդյունքում հիմնական եւ (կամ) բազային ապահովագրավճարը պակաս կլինի սույն կանոններով նախատեսված նվազագույն սահմանաչափից, թե՝ ոչ (այս կանոնը միայն այն ապահովադիրների վրա է տարածվում, ովքեր գտնվում են ԲՄ ցածր ռիսկային խմբում), Բյուրոյի կողմից ընդունված RL1-001 կանոնների Հավելված 3-ի 11-րդ կետ)):

Վերոնշյալի վերլուծության արդյունքում կարող ենք արձանագրել, որ ապահովագրական ընկերությունը ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գծով ապահովագրավճարների չափը հաշվարկելիս իրավունք չունի՝

- *ԱՊՊԱ պայմանագրերի գծով կիրառել ապահովագրավճարի տարբեր չափեր,*
- *դուրս գալ ԱՊՊԱ օրենքի հավելվածում նշված բանաձևերի շրջանակներից և առաջարկել ավելի ցածր ապահովագրավճար,*
- *ԱՊՊԱ պայմանագրի համար հաշվարկված վերջնական ապահովագրավճարների նկատմամբ կիրառել որևէ ուղղակի և անուղղակի զեղչ,*
- *ԱՊՊԱ պայմանագրերի կնքումը կազմակերպել առցանց էլեկտրոնային ցանկացած եղանակով և հիմնական ապահովագրավճարի չափից հինգ տոկոս ցածր չափով, քանի որ առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայամանգիր կնքել կարող են միայն համապատասխան պահանջներին բավարարող ապահովադիրները (նման իրավունք չունեն ո՛չ ապահովագրողը, ո՛չ էլ ապահովագրական գործակալը),*
- *իր ինտերնետային կայքում տեղադրված ապահովագրական հաշվիչի միջոցով հաշվարկված ապահովագրավճարի մեծությունից տարբերվող ապահովագրավճարի մեծությունով ԱՊՊԱ պայմանագիր կնքել, եթե հաշվարկը կատարվում է միևնույն ապահովադրի համար և նույն պայմաններով:*

Նման պայմաններում հարց է առաջանում՝ արդյո՞ք 1-ին տեղը զբաղեցրած և ընտրված մասնակից ճանաչված «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի կողմից առաջարկված նվազագույն գինը, ինչպես նաև 2-րդ տեղը զբաղեցրած «Արմենիա ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի կողմից առաջարկված գինը համապատասխանում են ՀՀ օրենսդրության պահանջներին, թե՝ ոչ, այսինքն՝ արդյո՞ք նրանց կողմից համապատասխան փոխադրամիջոցների համար ապահովագրավճարների չափը հաշվարկվել է վերոնշյալ իրավական պահանջների շրջանակներում և պահպանմամբ, թե՝ ոչ: Այս հարցի պատասխանը էական նշանակություն ունի ինչպես բողոքի քննության, այնպես էլ գնման ընթացակարգի արդյունքում Հանձնաժողովի կողմից համապատասխան որոշում կայացնելու համար:

Հետևաբար, մրցույթի ընտրված մասնակից ճանաչված «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի հետ չի կարող կնքվել Հարցմանը կից պայմանագիրը, եթե վերջինս նվազագույն գին առաջարկելիս խախտել է ՀՀ օրենսդրության պահանջները: Ուստի նրա կողմից ներկայացված հայտը պետք է գնահատվի անբավարար և մերժվի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ Հանձնաժողովի 15.12.2021 թ. նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացված որոշումը՝ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊ ընկերությանը մրցույթի ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ, չի կարող իրավաչափ լինել, եթե վերջինիս կողմից ներկայացված նվազագույն գինը հաշվարկվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ:

Բ) Սույն բողոքի քննության համար էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը, մյուս մասնակիցների նման, ևս ներկայացրել է գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն, ինչը ներկայացվել է ոչ թե «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի կամ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերության կամ «Արմենիա ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊ ընկերության անունից, որոնց ապահովագրական գործակալն է հանդիսանում, այլ հենց իր անունից: Նշված հայտարարությամբ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը հայտարարել է և հավաստել, որ բավարարում է Հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակցող անձն է:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագիրը ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեցող ապահովագրական ընկերության և ապահովադրի միջև սույն օրենքի համաձայն կնքված ԱՊՊԱ պայմանագիրն է:

ԱՊՊԱ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված դասով ապահովագրություն իրականացնելու իրավունք ունեցող, Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները, որոնք Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում ունեն մշտապես գործող առնվազն մեկ մասնաճյուղ կամ գործակալ և բավարարում են օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պահանջները:

Նշված իրավական դրույթների վերլուծությունից հստակ է, որ ՊԵԿ-ի կողմից հայտարարված Հարցմանը մասնակցել կարող էին միայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված դասով ապահովագրություն իրականացնելու իրավունք ունեցող, Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները, քանի որ միայն նրանք ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեն, որպիսի նպատակով էլ պատվիրատուի կողմից հայտարարվել էր գնանշման հարցում: Իսկ ընտրված մասնակցի հետ պետք է կնքվի ԱՊՊԱ պայմանագիր, որի մի կողմում պետք է հանդես գա ՊԵԿ-ը, իսկ մյուս կողմում՝ համապատասխան ապահովագրական ընկերությունը:

Մինչդեռ տվյալ դեպքում «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը ԱՊՊԱ իրականացնելու իրավունք չունի: Բացի այդ, վերոնշյալ երեք ապահովագրական ընկերություններից, ում

գործակալն է «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ն, որևէ մեկը չի լիազորել «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությանը հանդես գալու իր անունից վերոնշյալ գնման ընթացակարգում: Հետևաբար, Հարցման շրջանակներում նրա հետ չի կարող կնքվել ԱՊՊԱ պայմանագիր: Ուստի, նրա կողմից ներկայացված հայտը պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հարցման հրավերի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ կետերի համաձայն՝ ապահովագրական գործակալի գործունեությունը ապահովագրական ընկերության անունից և հաշվին ապահովագրական միջնորդային գործունեության իրականացումն է, այն է՝ երրորդ անձի կողմից՝ ապահովագրողների և ապահովադիրների միջև ապահովագրական հարաբերությունների հաստատմանը, նրանց միջև ապահովագրության պայմանագրի կնքմանը դրդող, նպաստող, աջակցող կազմակերպչական, այլ փաստացի և իրավական գործողությունների իրականացում, մասնավորապես՝

ա. ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կնքման նախապատրաստական աշխատանքների, այդ թվում՝ նաև ապահովագրական խորհրդատվության իրականացում.

բ. ապահովադիրների՝ կոնկրետ ապահովագրողների հետ ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կնքման կազմակերպում.

գ. ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կատարման օժանդակում, ներառյալ՝ ապահովագրավճարների հավաքման և հատուցումների փոխանցման իրականացումը՝ ապահովադրի կամ Ընկերության թույլատրած չափերով:

Նշված դրույթներից հստակ է, որ ապահովագրական գործակալը ապահովագրական ծառայություններ մատուցելու իրավասություն չունի, որպիսի նպատակով Պատվիրատուի կողմից հայտարարվել է գնանշման հարցումը՝ տեխնիկական-բնութագրում նշելով այն ավտոմեքենաները, որոնց համար պետք է կնքվի ԱՊՊԱ պայմանագիր: Հակառակը՝ ԱՊՊԱ պայամանգիր կարող է կնքվել միայն ապահովագրական ընկերության հետ՝ որպես ապահովագրող, որպիսին «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ»

ՍՊ ընկերությունը չի հանդիսանում: Ուստի վերջինիս հետ՝ որպես կատարող, այս պատճառաբանությամբ ևս չի կարող կնքվել հարցման հրավերին կից պայմանագիրը:

Այսպիսով, «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը իրավասու կլիներ Հարցմանը մասնակցել, եթե ուղղակիորեն լիազորված լիներ համապատասխան ապահովագրական ընկերության կողմից մասնակցելու դրան, սակայն տվյալ ընթացակարգում «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը հանդես է գալիս իր անունից:

Հետևաբար, «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը՝ որպես ապահովագրական գործակալ, ի սկզբանե հարցմանը մասնակցելու իրավասություն չի ունեցել, սակայն դրան մասնակցել է՝ որպես կատարող (ապահովագրող) ԱՊՊԱ պայմանագրեր կնքելու ակնկալիքով:

Նշանակում է՝ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերության անունից ներկայացված գնանշման հարցմանն մասնակցելու դիմում-հայտարարությունը, որով վերջինս հայտարարել է և հավաստել, որ բավարարում է Հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, իրականում չի բավարարում այդ պահանջներին, քանի որ նրա կողմից չեն կարող ապահովագրական ծառայություններ մատուցվել, իրականացվել ապահովագրական գործի քննություն և ապահովագրական հատուցման մասին որոշում կայացվել:

Ուշագրավ է, որ գնանշման հարցման հրավերին կից պայմանագրի համաձայն՝ Կատարողը սրանձնում է տրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայությունների (ԱՊՊԱ) մատուցման պարտավորությունը: Հետևաբար, առավել քան ակնհայտ է, որ ապահովագրական գործակալը, տվյալ դեպքում՝ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը չի կարող լինել նշված պայմանագրի կողմ (կատարող), քանի որ նրա կողմից ապահովագրական ծառայություններ չեն մատուցվում:

Այսպիսով, կարող ենք վերստին փաստել, որ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը՝ հանդես գալով որպես ապահովագրական գործակալ, ի սկզբանե Ընթացակարգին մասնակցելու իրավասություն չի ունեցել:

Այն, որ ապահովագրական գործակալի հետ չի կարող կնքվել հրավերում նշված պայմանագիրը, հաստատվում է նաև գնանշման հարցման հրավերին կից պայմանագրի 7.6. կետի բովանդակությամբ, որի համաձայն՝ եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժորովին դադարեցնել 15.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊ ընկերության վերաբերյալ կայացված որոշումը:

2. Պարտավորեցնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժորովին «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

3. Պարտավորեցնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովին «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

4. Պարտավորեցնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովին «Բի Բի Էս Սի» ՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. Պարտավորեցնել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊ ընկերությանը յուրաքանչյուր շարժիչավոր փոխադրամիջոցի մասով ներկայացնել իր առաջարկած գնի արժեքի հաշվարկը (բացվածքը) և այլ մանրամասն տեղեկատվություն, որով պայմանավորված է եղել տվյալ շարժիչավոր փոխադրամիջոցի ապահովագրական ծառայությունների ձեռքբերման արժեքի չափը:

6. Պարտավորեցնել «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊ ընկերությանը յուրաքանչյուր շարժիչավոր փոխադրամիջոցի մասով ներկայացնել իր առաջարկած գնի արժեքի հաշվարկը (բացվածքը) և այլ մանրամասն տեղեկատվություն, որով պայմանավորված է եղել տվյալ շարժիչավոր փոխադրամիջոցի ապահովագրական ծառայությունների ձեռքբերման արժեքի չափը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 22.12.2021թ.-ին թիվ 01/ԲՔԱ-ԼՕ/2/21241-2021 գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ հնարավորություն տալով «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից 20.12.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 24.12.2021թ.-ի թիվ 1/18-2/83142-2021 գրությամբ ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը՝ չներկայացնելով գրավոր դիրքորոշում:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/116 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով

03.12.2021թ.-ին հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի մասին հայտարարության համաձայն՝ սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների կատարման պայմանագիր:

iii. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1.1 կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերումը:

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն, «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն, «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն և «Բի Բի Էս Սի» ՍՊԸ-ն:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.12.2021թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից առաջարկել է հետևյալ գները.

</<Ձ/Հ		Մասնակիցների անվանումները	Ծառայության անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			պլանավորված առավելագույն ընդհանուր արժեքը /ՀՀ դրամ/
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ **ԱԱՀ-Ն ՀՀ** դրամ	
1	1	ԱՁ Արթուր Կիրակոսյան	Շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայություններ	5 877 600	0%	5 877 600	4 986 000
2		«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ		4 846 000	0%	4 846 000	
3		«ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ		4 846 000	0%	4 846 000	
4		«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ		4 846 000	0%	4 846 000	
5		«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ		4 567 000	0%	4 567 000	
6		«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ		4 553 000	0%	4 553 000	

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, «Արթուր Կիրակոսյան» Ա/Ձ-ին, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին, «Բի Բի Էս Սի» ՍՊԸ-ին, «Սիլ Ինշոիրանս» ԱՓԲԸ-ին, «Արմենիա Ինշոիրանս» ԱՍՊԸ-ին և «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին որոշել է ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներ: Ինչպես նաև Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած «Արթուր Կիրակոսյան» Ա/Ձ-ին, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին, «Բի

Բի Էս Սի» ՍՊԸ-ին, «Սիլ Ինշորիրանս» ԱՓԲԸ-ին, «Արմենիա Ինշորիրանս» ԱՍՊԸ-ին և «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7 ծածկագրով գնման հրավերի 8.7 կետի համաձայն հրավիրել գնի նվազեցման համար միաժամանակյա բանակցությունների, քանի որ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնման ընթացակարգը իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

vii. Հանձնաժողովի 15.12.2021թ.-ի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը բանակցությունների համար «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին, «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ին, «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին և «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին տրամադրեց 10 րոպե: Բանակցությունների ավարտին մասնակիցները հայտով ներկայացրած գները թողեցին անփոփոխ:

Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված առավելագույն ընդհանուր գինը, որոշել է՝

1. «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
2. «Արթուր Կիրակոսյան» Ա/Ձ-ի հայտը մերժել, քանի որ մասնակցի կողմից ներկայացված գինը գերազանցում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված առավելագույն ընդհանուր գինը:
3. «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
4. Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

viii. www.gnumner.am կայքում 15.12.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ 5 օրացուցային օր:

ix. ՀՀ Կենտրոնական բանկի կողմից https://www.cba.am/ պաշտոնական կայքում հրապարակված ապահովագրական ընկերությունների վերաբերյալ ցանկի համաձայն՝ «Բի Բի Էս Սի» ՍՊԸ-ն նշված ցանկում ընդգրկված չէ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից 20.12.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ

ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը

գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված

գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Հրավերի 8.21-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով (Հրավերի 8.21) սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը *(տե՛ս, օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գուրգեն Այվազյանի և այլոց թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավական դիրքորոշման համատեքստում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 67-րդ կետով ամրագրված գնահատող հանձնաժողովի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է հանձնաժողովին (պատվիրատուին) վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ հանձնաժողովի (պատվիրատուի) հնարավորությանը,

3) հանձնաժողովի (պատվիրատուի) կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վերջինս չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը: Սույն դեպքում Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները կիրառելի չեն, այն պարզ փաստի հաշվառմամբ, որ նշված նորմերի կիրառումը վերաբերում է մասնակցի հայտում՝ հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանություններին:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 983-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի հետ ապահովադրի կնքած ապահովագրության պայմանագրի և (կամ) ապահովագրական վկայագրով:

Օրենսգրքի 994-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ որպես ապահովագրողներ՝ ապահովագրության պայմանագրեր կարող են կնքել ապահովագրության համապատասխան դասով ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք: Ապահովագրողների և դրանց գործունեության վերաբերյալ պահանջները, դրանց լիցենզավորման, պետական կարգավորման և վերահսկողության իրականացման կարգը սահմանվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության

պարտադիր ապահովագրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) իրավական ակտերով, Բյուրոյի կանոններով և իրավական այլ ակտերով:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ԱՊՊԱ՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագիր՝ ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեցող ապահովագրական ընկերության և ապահովադրի միջև սույն օրենքի համաձայն կնքված ԱՊՊԱ պայմանագիր:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված դասով ապահովագրություն իրականացնելու իրավունք ունեցող, Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները, որոնք Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում ունեն մշտապես գործող առնվազն մեկ մասնաճյուղ կամ գործակալ և բավարարում են օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պահանջները:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝

8) ապահովագրական գործակալ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովագրական գործակալի գործունեություն իրականացնելու համար Կենտրոնական բանկի ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառված անձ

9) ապահովագրական գործակալի գործունեություն՝ անձի կողմից մեկ կամ մի քանի ապահովագրական և (կամ) վերաապահովագրական ընկերությունների անունից և հաշվին ապահովագրական միջնորդային գործունեության իրականացում:

10) ապահովագրական գործունեություն՝ անձի կողմից որպես ապահովագրող կողմ պարբերաբար իր անունից ապահովագրական գործարքների կնքմանը, ինչպես նաև դրանցով ստանձնած պարտավորությունների կատարմանն ու ձեռք բերած իրավունքների իրականացմանն ուղղված փաստացի գործողությունների ամբողջություն:

11) ապահովագրական ընկերություն (Ընկերություն)՝ սույն օրենքով սահմանված կարգով ապահովագրական գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ:

12) ապահովագրական միջնորդային գործունեություն՝ երրորդ անձի կողմից՝ ապահովագրողների (վերաապահովագրողների) և ապահովադիրների միջև ապահովագրական հարաբերությունների հաստատմանը, նրանց միջև ապահովագրության պայմանագրի կնքմանը դրդող, նպաստող, աջակցող կազմակերպչական, այլ փաստացի և իրավական գործողությունների իրականացում, մասնավորապես՝

ա. ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կնքման նախապատրաստական աշխատանքների, այդ թվում՝ նաև ապահովագրական խորհրդատվության իրականացում.

բ. ապահովադիրների՝ կոնկրետ ապահովագրողների հետ ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կնքման կազմակերպում.

գ. ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կատարման օժանդակում, ներառյալ՝ ապահովագրավճարների հավաքման և հատուցումների փոխանցման իրականացումը՝ ապահովադրի կամ Ընկերության թույլատրած չափերով.

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ ոչ կյանքի ապահովագրության դասերն են՝ ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրությունը:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապահովագրական գործակալի գործունեություն կարող են իրականացնել միայն Կենտրոնական բանկի՝ սույն օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով միջնորդների ռեգիստրում որպես ապահովագրական գործակալ հաշվառված անձը:

Ամբողջ վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունում ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված դասով ապահովագրություն իրականացնելու իրավունք ունեցող, Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները: Ընդ որում, ապահովագրական ընկերությունը սույն օրենքով սահմանված կարգով ապահովագրական գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձն է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման

նպատակով 03.12.2021թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասին հայտարարության համաձայն՝ սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների կատարման պայմանագիր, իսկ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1.1 կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերումը:

Հանձնաժողովի 10.12.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ Հանձնաժողովը, Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Արթուր Կիրակոսյան» Ա/Ձ-ին, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին, «Բի Բի Էս Սի» ՍՊԸ-ին, «Սիլ Ինշորիրանս» ԱՓԲԸ-ին, «Արմենիա Ինշորիրանս» ԱՍՊԸ-ին և «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին որոշել է ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներ: Ինչպես նաև Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած «Արթուր Կիրակոսյան» Ա/Ձ-ին, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին, «Բի Բի Էս Սի» ՍՊԸ-ին, «Սիլ Ինշորիրանս» ԱՓԲԸ-ին, «Արմենիա Ինշորիրանս» ԱՍՊԸ-ին և «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնման հրավերի 8.7 կետի համաձայն հրավիրել գնի նվազեցման համար միաժամանակյա բանակցությունների, քանի որ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնման ընթացակարգը իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Հանձնաժողովը 15.12.2021թ.-ի թիվ 4 արձանագրությամբ, հաշվի առնելով, որ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված առավելագույն ընդհանուր գինը, որոշել է՝

1. «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
2. «Արթուր Կիրակոսյան» Ա/Ձ-ի հայտը մերժել, քանի որ մասնակցի կողմից ներկայացված գինը գերազանցում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված առավելագույն ընդհանուր գինը:
3. «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
4. Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից https://www.cba.am/ պաշտոնական կայքում հրապարակված ապահովագրական ընկերությունների վերաբերյալ ցանկի համաձայն՝ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ն նշված ցանկում ընդգրկված չէ:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Ընկերության կողմից ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքներին, ինչպես նաև ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի պահանջները՝ Բողոքներ քննող անձը գալիս է եզրակացության, որ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած «Բի Բի Էս Սի» ՍՊԸ-ի հայտն ենթակա էր մարժման, քանի որ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից https://www.cba.am/ պաշտոնական կայքում հրապարակված ապահովագրական ընկերությունների վերաբերյալ ցանկում «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ն ընդգրկված չէ, այսինքն՝ չի հանդիսանում «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված դասով ապահովագրություն իրականացնելու իրավունք ունեցող ընկերություն, ըստ այդմ՝ նշված գործունեությունն իրականացնելու համար պահանջվող լիցենզիա չունի, իսկ սույն որոշմամբ ամրագրված և վերլուծության ենթարկված իրավական նորմերը ցույց են տալիս, որ ապահովագրական գործակալն ԱՊՊԱ պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված չէ:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Հանձնաժողովը, ելնելով վերը հիշատակված նորմերի դրույթներից, պետք է կիրառեր Կարգի 67-րդ և Հրավերի 8.21-րդ կետերով սահմանված դրույթները՝ ուսումնասիրեր ՀՀ Կենտրոնական բանկի https://www.cba.am/ պաշտոնական կայքում հրապարակված ապահովագրական ընկերությունների վերաբերյալ ցանկը և նոր միայն կայացներ ներկայացված հայտերը բավարար գնահատելու մասին որոշում:

Նման պայմաններում՝ Հանձնաժողովը, «Բի Բի Էս Սի» ՍՊԸ-ի և «Արթուր Կիրակոսյան» Ա/Ձ-ի հայտերը բավարար գնահատելու մասին որոշում կայացնելով, գործել է ոչ իրավաչափ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, կայացնելով «Բի Բի Էս Սի» ՍՊԸ-ի հայտը հրավերով նախատեսված պայմաններին բավարար գնահատելու մասին որոշում, թույլ է

տվել Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 67-րդ և Հրավերի 8.21-րդ կետերի խախտումներ, որպիսի պայմաններում բողոքն այս պահանջի մասով հիմնավոր է և ենթակա բավարարման:

Անդրադառնալով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի և «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի հայտերն անբավարար գնահատելու և մերժելու մասին բողոքով ներկայացված պահանջներին՝ Բողոքներ քննող անձը փաստում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենքը կարգավորում է պատվիրատուների կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

23) գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը չի տարածվում գործարքների հետևյալ տեսակների վրա.

1) աշխատանքային պայմանագրեր.

2) օրենքով նախատեսված դեպքերում քրեական, վարչական կամ դատական վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց որոշումներով նախատեսված կոնկրետ անձանց կողմից մատուցվող ծառայությունների ձեռքբերում.

3) արժեթղթերի հավատարմագրային կառավարման հետ կապված գործարքներ.

4) պետություն-մասնավոր գործընկերության, ներառյալ կոնցեսիայի այն գործարքները, որոնք կարգավորվում են «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով…:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 28.06.2010թ.-ին թիվ 1/669-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 19.08.2010թ.-ին թիվ 216-Ա որոշմամբ փոփոխված Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կանոնադրության (այսուհետ նաև՝ Կանոնադրություն) 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ սույն կանոնադրությունը մշակվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ստորև՝ Օրենք), ինչպես նաև իրավական այլ ակտերի պահանջներին համապատասխան: «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպությունը (ստորև՝ Բյուրո) Օրենքի համաձայն հիմնադրված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ստորև՝ ԱՊՊԱ) իրականացնող ապահովագրական ընկերությունների բյուրոն է, որի գործունեության նպատակը տուժած անձանց շահերի պաշտպանությունն է և ԱՊՊԱ համակարգի կայունության և զարգացման ապահովումը, այդ թվում՝ ԱՊՊԱ-ի ոլորտում իր անդամ ապահովագրական ընկերությունների գործունեության արդյունավետությանը նպաստելու, այն կարգավորելու և վերահսկելու, ԱՊՊԱ-ի ոլորտում իր անդամ ապահովագրական ընկերությունների համար մասնագիտական վարքագծի կանոններ մշակելու միջոցով: (փոփ. է Բյուրոյի անդամների ընդհանուր ժողովի 22/11/2017թ թիվ 4-Լ):

Կանոնադրության 3-րդ կետի համաձայն՝ Բյուրոն հիմնադրվել է «իրավաբանական անձանց միություն» կազմակերպական-իրավական ձևով «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միություն անվանումով՝ համաձայն Օրենքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի՝ որպես հիմնադրի նախագահի որոշմամբ: Հետագայում Օրենքում կատարված համապատասխան փոփոխության արդյունքում Բյուրոն վերակազմավորվել է հասարակական կազմակերպության: (փոփ. է Բյուրոյի անդամների ընդհանուր ժողովի 22/11/2017թ թիվ 4-Լ):

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ հասարակական կազմակերպություն հանդիսացող, ըստ այդմ՝ այդպիսի կազմակերպաիրավական կարգավիճակ ունեցող Բյուրոյի կողմից ընդունված որևէ կանոն, իրավական առումով, չի կարող գնումների օրենսդրության հետ իրավական հակասությունների (իրավական կոլիզիաների) իրավիճակ առաջանալու դեպքում ունենալ հավասար կամ առավել ևս ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող դրույթ:

Անդրադառնալով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին և «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ին շարժիչավոր փոխադրամիջոցի մասով առաջարկած գների արժեքի հաշվարկը (բացվածքը) և այլ մանրամասն տեղեկատվություն ներկայացնելուն պարտավորեցնելու մասին բողոքով ներկայացված պահանջներին՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ այն նույնպես անհիմն է, քանի որ Կարգի 32-րդ կետի 2-րդ մասի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում…:

Ուստի «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից 20.12.2021թ.-ին ներկայացված բողոքի մնացած բոլոր պահանջները, բացառությամբ «Բի Բի Էս Սի» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին հանձնաժողովին պարտավորեցնելու մասին պահանջի, ենթակա է մերժման՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից 20.12.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/116 ծածկագրով բողոքը բավարարել մասնակիորեն:
2. Պարտավորեցնել թիվ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Բի Բի Էս Սի» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում:
3. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**